


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՌԱՏԱՇԵՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
АРАТАШЕН

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF ARATASHEN

N: 78
« 15 » 11 2011

Արմավիրի մարզ , գ. Առատաշեն
Հեռախոս (0231) 6-23-28

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Ա. Ղահրամանյանին


Կից ուղարկվում է Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական
համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 8-ի թիվ 10
նիստի որոշումները:

Առ դիր 5 թերթ.

Համայնքի ղեկավար՝



/Յ. Անդրեասյան /





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ

08.11.2011 թվական

թիվ 10 նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ավագանու թիվ 10 նիստի օրակարգը համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Ս . Հարությունյան

2. Ս. Ղազարյան

3. Ա. Միրզոյան

4. Ս. Այվազյան

5. Հ. Անդրեասյան

6. Պ. Սկրտչյան

Համայնքի ղեկավար՝



/Հ. Անդրեասյան /

08.11.2011 ԹՎԱԿԱՆ

Գ. Առատաշեն



Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

0811.2011 թվականի Առաաշեն
գյուղական համայնքի ավագանու
թիվ 10 նիստի նո 1 որոշման

1. Օրակարգի հաստատում

2. Համայնքում 2012 թվականին տեղական տուրքերի և վճարների
դրույքաչափերը սահմանելու մասին :

2. Գումար հատկացնելու մասին

:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԻՐԻ ՍԱՐՁԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

08.11.2011 ԹՎԱԿԱՆ

թիվ 10 նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔՎՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերը՝ համաձայն հավելվածի;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

-Ավագանու անդամներ՝

Մ. Հարությունյան

Ս. Ղազարյան

Ս. Այվազյան

Պ. Մկրտչյան

Հ. Անդրեասյան

Ա. Միրզոյան

Համայնքի ղեկավար՝

/ Հ. Անդրեասյան /

2011թվականի նոյեմբերի 08


Գ. Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Արմավիրի մարզի սուրճի սուսանձեցնող գործակալական ընկերություն

ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ նոյեմբերի 8-ի թիվ 10 նիստի
թիվ 2 ՈՐՈՇՄԱՆ



ԴՐՈՒՅՔԱՉԱԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՍԱՆՉԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական, /ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ

բա/ 301-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500դր.

բբ/ 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ

բգ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տասնհինգ հազար դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շինությունների, շենքերի, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական

նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույթաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեխական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ;

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար երեք հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ:

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահունով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաներ/; խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար քրամ:

բ/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ:

գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝ երկու հարյուր հազար դրամ:

դ/ խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ;

ե/ շահունով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ:

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր անսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
- ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ժավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.
 - բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ժավալային տոկոս/արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ
 - գ/ այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.
 - դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ մեկ հազար դրամ
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հարյուր դրամ.
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսու/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է՝ տաս հազար դրամ;
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնքկառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ;
12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալություն տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ;
13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել մեկ հազար դրամ;



08.11. 2011 թվական

ԹԻՎ 10 ՆԻՍՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սոցիալական օգնության ֆոնդից հատկացնել դրամական օգնություն համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից;

Ավագանու անդամներ՝

1. Մ Հարությունյան
2. Ս. Ղազարյան
3. Ա. Միրզոյան
4. Ս. Այվազյան
5. Հ. Անդրեասյան
6. Պ. Մկրտչյան

Քիլև
[Signature]
[Signature]

Համայնքի ղեկավար՝



/ Հ. Անդրեասյան /

08.11. 2011 թվական

Գ. Առատշեն

Հավելված
 08.11.2011թվականի Առատաշեն
 գյուղական Համայնքի Ավագանու
 թիվ 10 նիստի նո 3 որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

Համայնքի նորածին երեխաներին և անապահով ընտանիքներին ֆինանսական
 օգնություն տրամադրելու մասին

1. Տերտերյան	Գրիշա	30000	/երեսուն հազար դրամ/
2. Հովհաննիսյան	Հովհաննես	30000	/երեսուն հազար դրամ/
3. Կարապետյան	Սուրիկ	20000	/քսան հազար դրամ/
4. Ասատրյան	Սուսաննա	40000	/քառասուն հազար դրամ/
5. Հայրապետյան	Թամարա	40000	/քառասուն հազար դրամ/
6. Վարդանյան	Սուսաննա	40000	/քառասուն հազար դրամ/
7. Իվանյան	Հմայակ	30000	/երեսուն հազար դրամ/
8. Պետրոսյան	Սարգիս	30000	/երեսուն հազար դրամ/
9. Երանյան	Արսեն	30000	/երեսուն հազար դրամ/
10. Հովհաննիսյան	Արսեն	30000	/երեսուն հազար դրամ/
11. Հարությունյան	Խաչատուր	30000	/երեսուն հազար դրամ/
12. Կարապետյան	Պարզև	30000	/երեսուն հազար դրամ/
13. Օզմանյան	Սամվել	30000	/երեսուն հազար դրամ/
14. Ղազարյան	Գեղանուշ	30000	/երեսուն հազար դրամ/
15. Սիմոնյան	Աբրահամ	30000	/երեսուն հազար դրամ/
16. Ահարոնյան	Էդգար	30000	/երեսուն հազար դրամ/
17. Սահակյան	Սոնիկ	30000	/երեսուն հազար դրամ/
18. Սողբաթյան	Սամվել	40000	/քառասուն հազար դրամ/
19. Հակոբյան	Հովհաննես	40000	/քառասուն հազար դրամ/
20. Նազարյան	Արմեն	50000	/հիսուն հազար դրամ/
21. Այվազյան	Ստեփան	50000	/հիսուն հազար դրամ/
22. Բարսեղյան	Եղիազար	50000	/հիսուն հազար դրամ/